## ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ՀՀՍՆ- ԾՀԱՊՁԲ-15/3-17/1»

ք. Երևան <<15>> <<փետրվար>> 2017թ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետ՝<<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրենական պիտույքները և գրասենյակային նյութերը /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.8 Չնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես

նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 870759 (ութ հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան սույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2017թ. :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ____օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը[1]:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը կատարված Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը՝ մինչև 2017թ հունիսի 30-ը:

---

[1] Այս կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

[2] Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և կնքվել համաձայնագիր:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| ՀՀ սփյուռքի նախարարություն | Սմարթլայն ՍՊԸ |
| ք. Երևան, Վ. Սարգսյան 3 | ք. Երևան, Վարդանանց 110 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048 | Հ/Հ 16300-7031509 |
| ՀՎՀՀ 02705838 | ՀՎՀՀ 01548908 |
| | Էլ. հասցե՝ ssmartline@mail.ru |
| | Հեռ. (010)558483 |
| | Տ.Ղարիբյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N ...
<<15>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
«ՀՀՍՆ- ՇՀԱՊՁԲ-15/3-17/1» ծածկագրով ձեռքի պայմանագրի

# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

ԱՊՐԱՆՔ

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿ | Չ/Մ | ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆԸ | ՆԿԱՐԱԳԻՐԸ | ՄԱՏԱԿԱՐԱՄԱՆ ՎԱՅՐԸ | ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոթատետր /նախարարության աշխ. | 50 | հատ | 190 | Նոթատետր, A5 ֆորմատի, տողանի, 70 թերթ, վերևից պարույրով: 'SinAr'կամ համարժեք | ք.Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ սփյուռքի նախարարություն | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2017թ մարտի 31-ը |
| 2 | Նոթատետր /նախարարի աշխ. | 25 | հատ | 190 | Նոթատետր, A5 ֆորմատի, տողանի, 70 թերթ, վերևից պարույրով: 'SinAr'կամ համարժեք | | |
| 3 | Ծրար /նախարարության աշխ. | 3000 | հատ | 15 | CD-ի համար նախատեսված թղթե ծրար, երեսի կողմը թափանցիկ թաղանթ, թղթի սպիտակությունը 90%,խտությունը 80գ/մ2, առանց գրությունների, 125 x 125մմ | | |
| 4 | սեղմակ, մեծ /նախարարության աշխ. | 50 | հատ | 40 | Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 41 մմ, արդյունավետ ամրեցնում է 120-150 թերթ: | | |
| 5 | սեղմակ, մեծ /նախարարի աշխ. | 40 | հատ | 40 | Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 41 մմ, արդյունավետ ամրեցնում է 120-150 թերթ: | | |
| 6 | սեղմակ, միջին /նախարարության աշխ. | 40 | հատ | 22 | Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 32 մմ, արդյունավետ ամրեցնում է 90-120 թերթ: | | |
| 7 | Մկրատ գրասենյակային /նախարարության աշխ. | 30 | հատ | 160 | Մկրատ, գրասենյակային, 13 սմ: չժանգոտող պողպատից: | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Մկրատ գրասենյակային /նախարարի աշխ. | 18 | հատ | 160 | Մկրատ, գրասենյակային, 13 սմ: չժանգոտող պողպատից: | | |
| 9 | թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ /նախարարությ ան աշխ. | 2000 | հատ | 7 | Ֆայլ, պոլիէթիլենային A4 ֆորմատի, 40 միկրոն, թափանցիկ: | | |
| 10 | թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ /նախարարի աշխ. | 1000 | հատ | 7 | Ֆայլ, պոլիէթիլենային A4 ֆորմատի, 40 միկրոն, թափանցիկ: | | |
| 11 | Թղթապանակ /նախարարությ ան աշխ. | 30 | հատ | 190 | Թղթապանակ ռետիններով, A4 ֆորմատի,, կապույտ և սև գույների | | |
| 12 | Թղթապանակ թելով, թղթյա /նախարարությ ան աշխ. | 40 | հատ | 60 | Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ (Б) տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ | | |
| 13 | թղթապանակ կոշտ կազմով /նախարարությ ան աշխ. | 20 | հատ | 590 | ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի, հաստությունը 8սմ, տարբեր գույների/սև, կապույտ/: A4 (,21x29.7) մմ ծավալի թղթերի համար: | | |
| 14 | կարիչ, 20-50 թերթի համար /նախարարությ ան աշխ. | 20 | հատ | 1149.9 5 | Միջին, կարիչ գրասենյակային՝ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար Օգտագործվող ասեղների քանակը՝100, ասեղի համարը՝24/6 | | |
| 15 | A4 թուղթ ֆորմատի /21x29.7 / /նախարարությ ան աշխ. | 390 | Տուփ /500 հատ/ | 1390 | Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ, միակողմ և երկկողմ թերթերի համար, սպիտակությունը ոչ | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պակաս քան 90 %, խտությունը 80գ/մ2: | | |
| 16 | A4 թուղթ ֆորմատի /21x29.7 / /նախարարի աշխ. | 60 | Տուփ /500 հատ/ | 1390 | Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ, միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/մ2: | | |
| 17 | թուղթ կազմի, ստվարաթղթե /նախարարությ ան աշխ. | 40 | հատ | 40 | A4 (210x297) մմ ձևաչափի, կազմի համար, թղթե, 230 գր , տարբեր գույների | | |
| 18 | թուղթ կազմի, ստվարաթղթե /նախարարի աշխ. | 50 | հատ | 40 | A4 (210x297) մմ ձևաչափի, կազմի համար, թղթե, 230 գր , տարբեր գույների | | |
| 19 | պլաստիկ զսպանակ, կարիչ /նախարարությ ան աշխ. | 40 | հատ | 25 | Տրամագիծը 16 մմ, նախատեսված է փաստաթղթերը կարելու համար | | |
| 20 | պլաստիկ զսպանակ, կարիչ /նախարարությ ան աշխ. | 50 | հատ | 25 | Տրամագիծը 16 մմ, նախատեսված է փաստաթղթերը կարելու համար | | |
| 21 | ռետին հասարակ /նախարարությ ան աշխ. | 40 | հատ | 25 | Ռետինե ջնջոց փոքր՝ հասարակ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար: | | |
| 22 | կպչուն թերթիկներ նշումների համար, /նախարարի աշխ. | 30 | հատ | 125 | Նշումների թուղթ, կպչուն, ինքնասոսնձվող,76մմ x 76մմ չափերի, 100 թերթ, դեղին | | |
| 23 | սոսնձամատիտ, գրասենյակային /նախարարիությ ան աշխ. | 30 | հատ | 100 | Սոսնձամատիտ, գրասենյակային , չոր, չափագրված 15գր: | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | ժողովների պլանավորման բլոկնոտներ /նախարարությ ան աշխ. | 30 | հատ | 1100 | արհեստական կաշվով երեսպատված հաստ կազմով , Օրգանայզեր 2017 թ-ի համար A5 ֆորմատի անգլերեն լեզվով, պինդ կազմով, /սև, կապույտ, շականակագույն/: 'FIS'կամ համարժեք: | | |
| 25 | գրիչ գնդիկավոր /նախարարությ ան աշխ. | 180 | հատ | 65 | Գրիչ գնդիկավոր միջուկի հաստությունը 1.0 մմ, կապույտ, սև, կարմիր: | | |
| 26 | գրիչ գնդիկավոր /նախարարի աշխ. | 150 | հատ | 65 | Գրիչ գնդիկավոր միջուկի հաստությունը 1.0 մմ, կապույտ, սև, կարմիր: | | |
| 27 | գրիչ գելային /նախարարությ ան աշխ. | 140 | հատ | 75 | Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների՝ սև, կարմիր կապույտ (գել) | | |
| 28 | գրիչ գելային /նախարարի աշխ. | 100 | հատ | 75 | Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների՝ սև, կարմիր կապույտ (գել) | | |
| 29 | Մատիտներ /նախարարությ ան աշխ. | 120 | հատ | 25 | Մատիտ HB, սրած, ռետինե ջնջոցով: սև,համապատասխան կարծրությամբ | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | Մատիտներ /նախարարի աշխ. | 100 | հատ | 25 | Մատիտ HB, սրած, ռետինե ջնջոցով: սև,համապատասխան կարծրությամբ | | |
| 31 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սկոչ) Չափսը: 48մմ x 100մ մեծ, /նախարարի աշխ. | 25 | հատ | 480 | Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, | | |
| 32 | թուղթ նշումների համար, սոսնձվացքով /նախարարությ ան աշխ. | 80 | հատ | 80 | Կպչուն, Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս | | |

* Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Վ. Սարգսյան 3 հասցեով:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
Սմարթլայն ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
Էլ. հասցեն՝ ssmartline@mail.ru
Հեռ. (010)558483
Տ. [illegible]

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«« 15»» «փետրվարի»» 2017թ. կնքված
«ՀՀԱՆ- ԵՀԱՊՁԲ-15/3-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| ՀՀ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2017թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Նոթատետր Նախարարության աշխ. | հատ | 190 | 50 | 9500 | | | | | | | 50 | 950 |
| 2 | Նոթատետր Նախարարի աշխ. | հատ | 190 | 25 | 4750 | | | | | | | 25 | 475 |
| 3 | Ծրար Նախարարության աշխ. | հատ | 15 | 3000 | 45000 | | | | | | | 3000 | 4500 |
| 4 | սեղմակ, մեծ Նախարարության աշխ. | հատ | 40 | 50 | 2000 | | | | | | | 50 | 200 |
| 5 | սեղմակ, մեծ Նախարարի աշխ. | հատ | 40 | 40 | 1600 | | | | | | | 40 | 160 |
| 6 | սեղմակ, միջին Նախարարության աշխ. | հատ | 22 | 40 | 880 | | | | | | | 40 | 880 |
| 7 | Մկրատ գրասենյակային Նախարարության աշխ. | հատ | 160 | 30 | 4800 | | | | | | | 30 | 480 |
| 8 | Մկրատ գրասենյակային Նախարարի աշխ. | հատ | 160 | 18 | 2880 | | | | | | | 18 | 2880 |
| 9 | թղթապանակ պոլիմերային թափանցիկ, ֆայլ Նախարարության աշխ. | հատ | 7 | 2000 | 14000 | | | | | | | 2000 | 1400 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | թղթապանակ պոլիմերային լայնակը, ֆայլ /Նախարարի աշխ. | հատ | 7 | 1000 | 7000 | | | | | | | 1000 | 7000 |
| 11 | Թղթապանակ /Նախարարությա ն աշխ. | հատ | 190 | 30 | 5700 | | | | | | | 30 | 5700 |
| 12 | Թղթապանակ թելով, թղթյա /Նախարարությա ն աշխ. | հատ | 60 | 40 | 2400 | | | | | | | 40 | 2400 |
| 13 | թղթապանակ կոշտ կազմով /Նախարարությա ն աշխ | հատ | 590 | 20 | 11800 | | | | | | | 20 | 11800 |
| 14 | կարիչ, 20-50 թերթի համար /Նախարարությա ն աշխ. | հատ | 1149.95 | 20 | 22999 | | | | | | | 20 | 22999 |
| 15 | A4 թուղթ ֆորմատի /21x29.7 / /Նախարարությա ն աշխ. | Տուփ /500 հատ/ | 1390 | 390 | 542100 | | | | | | | 390 | 542100 |
| 16 | A4 թուղթ ֆորմատի /21x29.7 / /Նախարարի աշխ. | Տուփ /500 հատ/ | 1390 | 60 | 83400 | | | | | | | 60 | 83400 |
| 17 | թուղթ կպչուն, ստիկերներ /Նախարարությա ն աշխ. | հատ | 40 | 40 | 1600 | | | | | | | 40 | 1600 |
| 18 | թուղթ կպչուն, ստիկերներ /Նախարարի աշխ. | հատ | 40 | 50 | 2000 | | | | | | | 50 | 2000 |
| 19 | պլաստիկ զսպանակ, կարիչ /Նախարարությա ն աշխ. | հատ | 25 | 40 | 1000 | | | | | | | 40 | 1000 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | պլաստիկ զսպանակ, կարիչ /Նախարարի աշխ. | հատ | 25 | 50 | 1250 | | | | | | | 50 | 1250 |
| 21 | ռետին հասարակ /Նախարարությա ն աշխ. | հատ | 25 | 40 | 1000 | | | | | | | 40 | 1000 |
| 22 | կպչուն թերթիկներ նշումների համար. /Նախարարի աշխ. | հատ | 125 | 30 | 3750 | | | | | | | 30 | 3750 |
| 23 | սոսնձամատիտ, գրասենյակային /Նախարարությա ն աշխ | հատ | 100 | 30 | 3000 | | | | | | | 30 | 3000 |
| 24 | ժողովների պլանավորման բլոկնոտներ /Նախարարությա ն աշխ. | հատ | 1100 | 30 | 33000 | | | | | | | 30 | 33000 |
| 25 | գրիչ գնդիկավոր /Նախարարությա ն աշխ. | հատ | 65 | 180 | 11700 | | | | | | | 180 | 11700 |
| 26 | գրիչ գնդիկավոր /Նախարարի աշխ. | հատ | 65 | 150 | 9750 | | | | | | | 150 | 9750 |
| 27 | գրիչ գելային /Նախարարությա ն աշխ. | հատ | 75 | 140 | 10500 | | | | | | | 140 | 10500 |
| 28 | գրիչ գելային /Նախարարի աշխ. | հատ | 75 | 100 | 7500 | | | | | | | 100 | 7500 |
| 29 | Մարկերներ /Նախարարությա ն աշխ. | հատ | 25 | 120 | 3000 | | | | | | | 120 | 3000 |
| 30 | Մարկերներ /Նախարարի աշխ. | հատ | 25 | 100 | 2500 | | | | | | | 100 | 2500 |
| 31 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սկոչ) Չափսը: 48մմ x | հատ | 480 | 25 | 12000 | | | | | | | 25 | 12000 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 100մ մեծ, /նախարարի աշխ. | | | | | | | | | | | | |
| 32 | թուղթ նշումների համար, սոսնձվացքով /նախարարության աշխ. | հատ | 80 | 80 | 6400 | | | | | | | 80 | 6400 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | 87075 |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
Սմարթլայն ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ ssmartline@mail.ru
Հեռ. (010)558483
Տ.Ղարիբյան

/ստորագրություն/

Հավելված N 3
«« 15»» «փետրվարի» 2017թ. կնքված
«ՀՀՍՆ- ԷՀԱՊՁԲ-15/3-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| | | Առաջին եռամսյակ | | | Երկրորդ եռամսյակ | | | Երրորդ եռամսյակ | | | Չորրորդ եռամսյակ | | | |
| 1. | Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր /Նախարարության աշխ./ | 100000 | | | 244000 | | | 512000 | | | 732379 | | | 732379 |
| 2 | Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր /Նախարարի աշխ./ | 20000 | | | 45460 | | | 90920 | | | 136380 | | | 138380 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | | 870759 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ԳՆՈՐԴ**
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
Սմարթլայն ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ ssmartline@mail.ru
Հեռ. (010)558483
Տ.Դարիբյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4
<< 15>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
«ՀՀԱՆ- ԷԱՃԱՊՁԲ 15/3-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ____________________________

______________________________

հվհհ __________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ____________________________

______________________________

հվհհ __________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «                » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________________, հիմք ընդունելով «____» «______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը Պայմանագրի կատարման վերաբերյալ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նախագծած ներկայացուցչի N  եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով ամրագրված տեխնիկական նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
<< 15>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
«ՀՀԱՆ-ԾՁԱՊՁԲ-15/3-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

**ԱԿՏ N**

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ——————————ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
——————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. —— -ին կնքված N ——————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ——— -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

The Knesset

THE JEWISH AGENCY FOR ISRAEL

# International Seminar on the Diaspora–Homeland Relationship
## Jerusalem, 6–8 March 2017
### REGISTRATION FORM

| Arrival | | | Departure | | |
|---|---|---|---|---|---|
| Date | Time | Flight No. | Date | Time | Flight No. |
| 05.03.2017 | **13:05pm** | **PS775** | 09.03.2017 | **15:15pm** | **PS780** |

- Please e-mail a scanned photograph in JPG format to daniella.bergen@mfa.gov.il
- Please address all questions and other correspondence to Ms. Daniella Berger via the contact details provided above.

Date: 22.02.2017 Signature: ____________

The Knesset

# International Seminar on the Diaspora–Homeland Relationship
## Jerusalem, 6–8 March 2017
**REGISTRATION FORM**

**Please complete a separate form for each participant and return the completed forms to Ms. Daniella Berger at the Ministry of Foreign Affairs:**

Tel.: +972-2-530-4065
Email: daniella.berger@mfa.gov.il

| | | |
|---|---|---|
| Country: | Armenia | |
| Organization: | Ministry of Diaspora, RA | |
| Position: | Head of Department | |
| Department: | Repatriation and Research | |
| Telephone: | +374 94 55 33 74 | |
| E-mail: | garshakyan@mail.ru | |
| Please indicate if you require hotel accommodations in Jerusalem (2 nights): | Y/N **Yes** | |
| Please indicate if you require: | Early check-in: Y/N **No** | Late check-out: Y/N **No** |
| Please indicate if you require ground transportation: | From the airport: Y/N **Yes** | To the airport: Y/N **Yes** |
| Flight details: | **Ukraine Intl Airlines** **Flight PS612** Mar 05, Sun., Yerevan (EVN) **06:40am** - Mar 05, Sun., Kiev Borispol (KBP) **07:50am** **Ukraine Intl Airlines** **Flight PS775** Mar 05, Sun., Kiev Borispol (KBP) **09:50am** - Mar 05, Sun., **13:05pm** Tel Aviv (TLV) | **Ukraine Intl Airlines** **Flight PS780** Mar 09, Sun., **15:15pm**, Tel Aviv (TLV) - Mar 09, Sun., **18:40pm**, Kiev Borispol **Ukraine Intl Airlines** **Flight PS611** Mar 09, Sun., **20:10pm**, Kiev Borispol - Mar 09, Sun., **00:55am**, Yerevan (EVN) |
| Special requirements (dietary, accessibility, etc.) | No | |
| Social media (Facebook, Twitter, etc.) | No | |

| Last Name | First Name | Title(s) | Date of Birth | Passport No. (if diplomatic passport, please indicate) | Accompanying person/s |
|---|---|---|---|---|---|
| Arshakyan | Grigor | Mr. | 27.10.1982 | AK0515636 | No |